ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/343

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2021թ. թիվ 26/26-1/21499-2021 գրությամբ «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Միասնական սոցիալական ծառայության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 23.12.2021թ. թիվ 02/ԳՋ/57523-2021 գրության հիման վրա, 27.12.2021թ. թիվ 26/26-1/21499-2021 գրությամբ նախաձեռնել է «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ 16 դեկտեմբեր 2021թ-ին կայացած «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չենք կարողացել շտկել տնօրենի էլեկտրոնային ստորագրության ոչ ակտիվ լինելու պատճառով»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/343 ընթացակարգի շրջանակներում 03.01.2022թ. ժամը 11:00-ին և 14.01.2022թ. ժամը 09:15 հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Միասնական սոցիալական ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Միասնական սոցիալական ծառայությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.12.2021թ. թիվ 02/ԳՋ/57523-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2021 թվականի դեկտեմբերի 3-ին Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով հայտարարվել է Ծառայության կարիքների համար մասնագիտական ուսուցման ծառայությունների գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով հինգ Կազմակերպություն՝ այդ թվում Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան ՊՈԱԿ (այսուհետ՝ Կազմակերպություն): Հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն Կազմակերպության ներկայացրած հայտում:

Գնահատող հանձնաժողովի 2021թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ հանձնաժողովի նիստը կասեցվել է մեկ աշխատանային օրով և հրավերով սահմանված կարգով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ժամանակ է տրվել անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն Կազմակերպությունը շտկված փաստաթուղթ չի ներկայացրել:

Գնահատող հանձնաժողովի 2021թ. դեկտեմբերի 20-ի նիստի որոշմամբ մերժվել է Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան ՊՈԱԿ-ի հայտը ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն, հետևյալ հիմնավորմամբ՝ հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/7» ծածկագրով հրավերով սահմանված պայմաններին:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեզ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ընթացք տալու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/343 ընթացակարգի շրջանակներում 03.01.2022թ. ժամը 11:00-ին և 14.01.2022թ. ժամը 09:15 հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/343 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/343 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար հայտարարվել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ մասնավորապես.

- հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, հայտի փաստաթղթերով ներկայացված չէ իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը (հավելված 1.2 կամ 1.3),

-ներկայացված աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (հավելված 1) չի համապատասխանում «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի

հրավերով սահմանված պահանջներին՝ «ռուսերեն լեզվով անվանումը» տողում լրացված է մասնակցի անվանման հայերեն տարբերակը:

- հայտի փաստաթղթերը ստորագրելու համար տրված լիազորագիրը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջներին՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, այն հիմքով, որ վերջինիս կողմից շտկված փաստաթղթեր չեն ներկայացվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.12.2021թ. թիվ 26/26-1/21499-2021 գրությունը, Միասնական սոցիալական ծառայության 23.12.2021թ. թիվ 02/ԳՋ/57523-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով և Ընկերության կողմից ներկայացրած դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները...:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ

հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Այսպես, Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար հայտարարվել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ մասնավորապես.

- հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, հայտի փաստաթղթերով ներկայացված չէ իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը (հավելված 1.2 կամ 1.3),

-ներկայացված աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (հավելված 1) չի համապատասխանում «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված պահանջներին՝ «ռուսերեն լեզվով անվանումը» տողում լրացված է մասնակցի անվանման հայերեն տարբերակը:

- հայտի փաստաթղթերը ստորագրելու համար տրված լիազորագիրը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջներին՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է

ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, այն հիմքով, որ վերջինիս կողմից շտկված փաստաթղթեր չեն ներկայացվել:

Վերը նշված փաստերի վերաբերյալ՝ ՍՑ-ՆԳ-2021/343 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ 16 դեկտեմբեր 2016թ-ին կայացած «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չենք կարողացել շտկել տնօրենի էլեկտրոնային ստորագրության ոչ ակտիվ լինելու պատճառով»:

Այսպիսով՝ սույն գործի փաստական հանգամանքների և վկայակոչված իրավական կարգավորումների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում անհամապատասխանությունները չի շտկել, այսինքն՝ «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/7» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2021թ. թիվ 26/26-1/21499-2021 գրությամբ «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**